

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Համալսարանի «Ջարթոնք» հանգստյան տան ուղեգրի արժեքը 2015թ-ի համար սահմանել.

- մեկ ուղեգրի արժեքը հունիս-սեպտեմբեր ամիսներին աշխատակիցների, ուսանողների և նրանց հետ հանգստացող ընտանիքի 1 անդամի համար, ով չի աշխատում համալսարանում՝ 7000 դրամ, իսկ բարելավված պայմաններով 2 սենյականոց համարների մեկ ուղեգրի արժեքը 8000 դրամ, ներառյալ ԱԱՀ 1 օրվա համար:

- աշխատակիցների ընտանիքի 1 անձից ավելի անդամների, ինչպես նաև մնացած/ ոչ համալսարանի աշխատակիցների/ հանգստացողների համար՝ մեկ ուղեգրի արժեքը՝ 11000 դրամ, ներառյալ ԱԱՀ 1 օրվա համար:

- 1-3 տարեկան երեխաների հանգիստը կազմակերպել անվճար, եթե նրանք չեն զբաղեցնելու առանձին մահճակալ:

- 3-7 տարեկան երեխաների համար սահմանել 50% զեղչ:

- 7-ից բարձր տարիքի երեխաների համար գանձել ուղեգրի լրիվ արժեքը:

Նոր տարվա սեզոնին 1 անձի ուղեգրի արժեքը սահմանել.

- համալսարանի աշխատակիցների, ուսանողների և նրանց հետ հանգստացող ընտանիքի 1 անդամի համար, ով չի աշխատում համալսարանում՝ 8000 դրամ, ներառյալ ԱԱՀ 1 օրվա համար:

- աշխատակիցների ընտանիքի 1 անձից ավելի անդամների, ինչպես նաև մնացած/ ոչ համալսարանի աշխատակիցների/ հանգստացողների համար՝ 13000 դրամ:

Ընդունել ի գիտություն, որ համաձայն ՀՀ արհկոմիտեի 24.11.2007թ-ի N 6 որոշման ՀԱԱՀ արհկոմի կողմից համալսարանի աշխատակիցներին հատուցվում է ուղեգրի օրեկան արժեքի 1000 դրամը:

2. Թույլատրել տուրիստական կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու և սոց. փաթեթներով հանգստացողներ ընդունելու համար:

Տուրիստական կազմակերպությունների հետ սահմանել հետևյալ գնացուցակը.

- մեկ անձի համար 13000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ը:

3. Երրորդ և չորրորդ հարկերի սենյակների համար ուղեգրերի արժեքը սահմանել համաատասխանաբար 20%-ով ցածր:

Հիմք՝

Ռեկտորատի և արհմիության կոմիտեի

16.05.2015թ. համատեղ նիստի որոշումը:

Ռեկտոր

Ա.Թարվերդյան